

«դապետ բժշկականացն ասացել են թէ՛ բնաւ գինի խմելու օգտութիւն «չկայ, և ինքն բնաւ չէ խմելու»:

«Ասէ Արիստոփէլ մեծ իմաստունն, թէ՛ ես գգինին իսկի չի «խմեցի և չհաւնեցայ. և ես զա՛յն իրքն կ'իմեմ, որ զխեղճն «կ'աւելցնէ. զայն չեմ խմեր որ զխեղճն պակսեցնէ»: Եւ կը յաւելու, թէ ինք իր իմաստութիւնը ա՛յս խեղճով դատած է. ուստի՛ պէտք չէ որ խեղճը կորսնցնէ:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

ՃԱՅՃԱՍՏԵՆԴԸ ԵՒ ԻՐ ԱԻԵՐՆԵՐԸ

II. ՃԱՅՃԱՍՏԵՆԴԻ ՄԱԿԱՌՈՅԾԸ

Նախորդ յօդուածով ծանօթացանք ճահճատենդը տարածող մեղիկն մասնաշատկութիւններուն: Այժմ ծանօթանանք այդ հիւանդութիւնը յառաջ բերող պատճառին:

Ճահճատենդի մանրէն առաջին անգամ ճահճատենդէ տառապողներու արեան մէջ տեսնողը եղաւ Փրանսացի գիտուն Լավլըրանը (1880), անոր համար Hematozoaire de Laveran անունը ստացած է: «Հէմաթօզօէր», այսինքն ուրիշ կենդանիի մը արիւնին ի հաշիւ ապրող, մակարոյծ:

«Հէմաթօզօէրը» մարդու մարմնին մէջ աստիճանական զարգացումով դանադան ձևեր կ'առնէ: Ան գլխաւորաբար կազմուած է փլազմօտիա ըստած մասէ մը և մատնածե ու սրճածե պղտիկ մարմիններէն: Այդ պղտիկ մարմինները սկիզբը անգոյն են, աւելի վերջը թուխ գոյն մը կ'առնեն: Այդ գոյնը մարդու արիւնին փճացումէն յառաջ կուգայ, որովհետեւ դիտականօրէն պպացուցուած է որ այս պղտիկ մարմինները արեան կարմիր գնդիկներուն վրայ յարձակելով սև նիւթի մը կը վերածեն դանոնք:

Ճահճատենդի մանրէներուն բազմապատկումը երկու ուրոշ ձևերով կը կատարուի. տեսակ մը անման չըջաններ են ատոնք: Առաջին ձևը, կամ անման առաջին չըջանը, ճահճատենդէ տառապող մարդուն արեան կարմիր գնդիկներուն մէջ, առանց արու կամ էջ փլազմօտիանի միջամտութեանը կատարուածն է: Երկրորդ ձևը, արուի և էջի կցորդութեամբ յառաջ եկած բազմապատկումն է, որ ճահճատենդէ տառապող մարդու արեան մէջ չի կատարուիր, այլ էջ անօֆէլի պտամբոսին մէջ կը բոլորուի:

Ահա թէ ինչպէս կը կատարուի առաջին չըջանի աճումը, մարդկային արեան մէջ, առանց արուի և էջի միջամտութեան: Ճահճա-

տենդի մանրէն անմիջապէս որ արեան շրջանին մէջ կը մտնէ, կուգայ կը փակչի արեան կարմիր գնդիկներուն և քիչ առ քիչ կարմիր գնդիկին մէջ կը թափանցէ: Յետոյ կը սկսի մեծնալ մինչև որ ամբողջ գնդիկի ներքին տարածութիւնը գրաւէ, որմէ վերջ գնալից կը պայթեցնէ, ուսկից դուրս կուգան նոր պղտիկ մարմիններ (փլազմօտիաններ), որոնք իրենց կարգին վերագրեալ գործողութիւնը կը շարունակեն. այսինքն տեսակ մը ամուրի վիճակի մէջ բազմապատկուած, աճում:

Աճման երկրորդ ձևը, և որ միայն էջ անօֆէլներու ստամոքսին մէջ տեղի կ'ունենայ, երկու սեռերու միացումով կը կատարուի:

Վերը նկարագրուած ճահճատենդի մանրէներուն ձևափոխուած մէկ տեսակը, կամէթն է՝ որ կը կատարէ այս ձևի բազմապատկումը: Գիտենք որ էջը բեղմնաւորման համար արեան պէս բորակածինով հարուստ սնունդի մը պէտք ունի: Երբ կը ծծէ ճահճատենդէ տառապող մարդու արիւնէն, որու մէջ ճահճատենդէ մանրէն «կամէթ» ձևով կը գտնուի, այդ «կամէթները» մօեղներու ստամոքսը մտնելով հոն կը միաւորուին. «կամէթներու» էջերը որդաձև մարմիններու կը փոխուին, մօեղի ստամոքսի հիւսուածքին մէջ կը տեղաւորուին և հոն պղտիկ ուներ կը կազմեն: Աւելի վերջ այդ ուռեցքները ճեղքուելով ահադին թիւով մահիկաձև պղտիկ մարմիններ կը գոյանան, որոնք սօրօզօխտ կը կոչուին:

Այս մարմինները մօեղին արեան շրջանին մէջ մտնելով լորձնային գեղձերուն մէջ կուգան: Երբ մօեղը խայթէ, սօրօզօխտները լորսուեցին հետ մարդուս արեան շրջանին մէջ կը մտնեն և հոն կը բազմանան վերը նկարագրուած աճման առաջին ձևով, այսինքն առանց արուի և էղի միջամտութեան: Ամէն անգամ որ արեան գնդիկները պայթին և փլազմօտիանները դուրս գան ու արեան մէջ տարածուին (տես վերը), հիւանդը կ'ունենայ դող, ջերմ և մալարիայի յատուկ արտանշանները:

Ճահճատենդի մանրէները, ըստ Golgi գիտունին երեք զանազան տեսակի են, համապատասխան հիւանդութեան երեք գլխաւոր տեսակներուն: Գէշ տեսակ տենդի մանրէ, չորեքօրեայ ջերմի մանրէ եւօրեայ ջերմի մանրէ: Բայց այս երեք տեսակ մանրէները ուրիշ բան չեն եթէ ոչ միակ մանրէի մը, այսինքն Լալլերանի կողմէ գրտնուած ճահճատենդի փլազմօտիինն այլափոխուած, տարբեր ձևերը:

Այս թանգադին ծանօթութիւնները մենք կը պարտինք մանրագէտին, որու միջոցաւ գիտութիւնը ճահճատենդի մանրէի մասին դեռ ուրիշ խիստ հետաքրքրական ուսումնասիրութիւններ կատարած է: